

**ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ**

<b>ՉԱՓԱՆԻՇ</b>	<b>ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ</b>	<b>ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴ</b>
<b>Եկամտաբերություն</b>	Պարտատոմսերը սովորաբար ապահովում են ավելի բարձր եկամտաբերություն:	Ներդրման համեմատելի ժամկետների դեպքում ավանդները սովորաբար ապահովում են ավելի ցածր եկամտաբերություն:
<b>Ներդրման ժամկետի ճկունություն</b>	Մինչև մարումը ցանկացած ժամանակ վաճառելու հնարավորություն՝ առանց վճարված տոկոսները կորցնելու:	Ավանդի ժամկետի ընթացքում պայմանագիրը լուծելու դեպքում տոկոսները կորցնելու հավանականություն:
<b>Գումարի տնօրինման ճկունություն</b>	Պարտատոմսերի մասնակի վաճառքի հնարավորություն:	Ավանդը մասնակի մարելու հնարավորություն սովորաբար չի տալիս: Եթե նույնիսկ այդպիսի հնարավորություն տրվում է, ապա նման ճկուն պայմաններով բանկային ավանդների նկատմամբ անհամեմատ ավելի ցածր տոկոսադրույք է սահմանվում:
<b>Ֆիքսված եկամուտ</b>	Պարտատոմսի գինը շուկայում կարող է ընկնել կամ բարձրանալ, սակայն անկախ ընթացիկ տատանումներից, պարտատոմսի սեփականատերը ժամկետի վերջում ստանում է ֆիքսված եկամուտ:	Ներդրված գումարի չափը չի ենթարկվում շուկայական տատանումների, եկամուտը նույնպես ֆիքսված է:

**ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ**

ՉԱՓԱՆԻՇ	ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ	ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴ
<p><b>Նախընտրած ճյուղում և ընկերությունում ներդրման հնարավորություն</b></p>	<p>Ներդրողը հնարավորություն ունի իր ուղղակի ներդրումն ունենալ տնտեսության իր ընտրած կոնկրետ ոլորտում, կոնկրետ ընկերությունում:</p>	<p>Ներդրողը իր խնայողությունները/ ազատ միջոցները կենտրոնացնում է բանկում, որն իր հայեցողությամբ է իրականացնում այդ գումարների տեղաբաշխումը:</p>
<p><b>Երաշխավորվածություն</b></p>	<p>Կարող է երաշխավորված լինել ընկերության գույքով:</p>	<p>Երաշխավորվում են ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից. դրամային ավանդների դեպքում՝ 10 մլն դրամի, դոլարային կամ դոլարային և դրամային ավանդներ դեպքում՝ 5 մլն դրամի չափով:</p>
<p><b>Եկամտի լրացուցիչ աղբյուրների ապահովում</b></p>	<p>Պարտատոմսերով հնարավոր է կնքել ռեպո համաձայնագրեր: Բացի տոկոսային եկամտից հնարավոր է ձևավորել նաև հավելյալ առևտրային եկամուտ:</p>	<p>Ավանդներով հնարավոր չէ կնքել ռեպո համաձայնագրեր:</p>
<p><b>Հարկում</b></p>	<p>Կորպորատիվ պարտատոմսերից ստացվող եկամուտը ֆիզ անձանց դեպքում հարկվում է 10%-ի չափով:</p>	<p>Բանկային ավանդներից ստացվող եկամուտը ֆիզ անձանց դեպքում հարկվում է 10%-ի չափով:</p>